ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
27 փետրվարի 2025 թվականի N 19-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՐՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածով

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 27- ի հերթական նիստի օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին,

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը հաստատելու մասին,

3. Անշարժ գույքի պայմանագրում փոփոխություն կատարելուն համաձայնություն տալու մասին:

4. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի համայնքային գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը գույք ամրացնելու մասին,

5.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0
Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ
Է. ԱՐՇԱԿՅԱՆ
Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Տ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հ. ՄԱՐԴՈՅԱՆ
Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ
Գ. ՋԱՎՈՒԿՅՅԱՆ
Ա. ՍՈԼՈՅԱՆ
Է. ՍՈՂՈՅԱՆ
Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2025 փետրվարի 27
ք. Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
27 փետրվարի 2025 թվականի N 20-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայսատնի Հանրապետոյթան օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետոյթան օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասով

Տաշիր համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ռ.ԱՎԴԱԼՅԱՆ
ԷԴԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆ
Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Տ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Հ. ՄԱՐԴՈՅԱՆ
Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ
Գ. ՋԱՎՈՒԿՋՅԱՆ
Ա. ՍՈԼՈՅԱՆ
Է. ՍՈՂՈՅԱՆ
Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է.ԱՐՇԱԿՅԱՆ**

2025 փետրվարի 27
ք. Տաշիր

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Եկամուտների վերլուծություն

Տաշիր համայնքի 2024 թվականի բյուջեն եկամուտների գծով կատարվել է 67,9 %-ով. բյուջեով նախատեսված 3024144,7 հազար դրամի դիմաց , փաստացի մուտքերը կազմել են 1998463,4 հազար դրամ:

Սեփական եկամուտների գծով կատարվել է 115,7%-ով, բյուջեով նախատեսված

390236,6 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 451658.0 հազար դրամ: Նախորդ տարվա համեմատությամբ ավելացել են 67722,1 հազար դրամով կամ 17,6 %-ով:

որից՝

- Հողի հարկի համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար նախատեսված 20000,0 հազ դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 36455,8 հազար դրամ, կատարվել է 182,3 %-ով: Նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 2834,8 հազար դրամով կամ 8,4%-ով:
- Գույքահարկի գծով փաստացի մուտքը 132659,0 հազար դրամի դիմաց կազմել 134596,8 հազար դրամ, կատարվել է 101,5 %-ով: Նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 2809,5 հազար դրամով կամ 2,1%-ով:
- Անշարժ գույքի հարկի մուտքը կազմել է 55565,5 հազար դրամ, նախատեսված 42666,6 հազար դրամի դիմաց,փաստացի կատարվել է 130,2 %-ով: Նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 13346,9 հազար դրամով կամ 31,6%-ով:
- Տեղական տուրքերը նախատեսված 7300.0 հազար դրամի դիմաց կազմել են 12915,1 հազար դրամ, կատարվել է 176,9%-ով: Նախորդ տարվա համեմատությամբ ավելացել 5670,7 հազար դրամով կամ 178,2%-ով :
- Պետական տուրքերի գծով փաստացի մուտքը նախատեսված 6500.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 8170,5 հազար դրամ, կատարվել է 125,7 %-ով: Նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 1599,0 հազար դրամով կամ 24,3%-ով:
- Այլ եկամուտներ՝ կատարվել են 158,2 %-ով, նախատեսված 82120,6 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 129928,0 հազար դրամ: Նախորդ տարվա համեմատությամբ պակաս է 176540,4 հազար դրամով կամ 42,4%-ով:
- Գույքի վարձակալությունից եկամուտները փաստացի հավաքագրվել են 81,6 %-ով, նախատեսված 128000,0 հազար դրամի դիմաց փաստացի հավաքագրվել է 104482,3 հազար դրամ, որից՝ 85424,7 հազար դրամ հողի վարձակալության վարձավճար, 19057,6 հազար դրամ գույքի վարձակալության վարձավճար: Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 6145,8 հազար դրամով կամ 5,9 %-ով :
- Վարչական գանձումները՝ (տեղական վճարներ) նախատեսված 52929,0 հազար դրամի դիմաց կազմել են 51088,8 հազար դրամ, կատարվել է 96,5 %-ով: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է 11933,8 հազար դրամով կամ 30,5%-ով:

- որից՝

  -աղբահանության համար վարձավճարը նախատեսված 24200.0 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 20293,3 հազար դրամ, կատարվել է 83,9 %-ով: Նախորդ տարվա համեմատությամբ հավաքագրվել է 4290,9 հազար դրամով ավել կամ 26,8 %-ով :

  -համայնքային ենթակայության մանկապարտեզների և արտադպրոցական դաստիրակության հաստատությունների ծառայություններից օգտվողների նախատեսված 25500.0 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 28561,5 հազար դրամ կամ կատարվել է 112,0 %-ով:

- Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-ի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտները կատարվել են 78,0 %-ով, նախատեսված 691.0 հազար դրամի դիմաց փաստացի հավաքագրվել է 220,0 հազար դրամ: Նախորդ տարվա համեմատությամբ հավաքագրվել է 170,0 հազար դրամով պակաս կամ 56,4 %-ով:
- Պաշտոնական դրամաշնորհների գծով՝ ստացվել է 2024 թ. 1463041,5 հազար դրամ, Նախորդ տարվա համեմատությամբ ավել է 300918,7 հազ.դրամով կամ 25,9 %-ով ,

  որից՝

  - Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիան նախատեսված 1247764,0 հազար դրամը ստացվել է 100%-ով: Նախորդ տարվա համեմատությամբ աճել է 454222,7 հազար դրամով:
  - Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվել է 213534,1 հազ.դրամ ,նախատեսված 1042924,1 հազար դրամի դիմաց: 2023 թ. համեմատությամբ պակաս է ստացվել 150385,9 հազար դրամով կամ 41,3 %-ով:
  - Պետական բյուջեից համայքնի բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումը (սուբվենցիա) նախատեսված երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցման համար 1743,1 հազար դրամ , ֆինանսավորվել է 100 %-ով:
- ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինասավորման համար պետական բյուջեից նախատեսված 1999,0 հազար դրամը ֆինանսավորվել է 100 %-ով:
- Նվիրատվություն՝ կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստատված մուտքեր՝ տրամադրված արտաքին աղբյուրներից 40000,0 հազար դրամ:
- Բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը (հավելուրդը կամ դեֆիցիտը) կազմել է 307345,4 հազար դրամ:

2. ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2.1 Ըստ գործառնական դասակարգման

Տաշիր համայնքի 2024 թվականի բյուջեն ծախսերի գծով կատարվել է 47,5%-ով, նախատեսված 3331490,1 հազար դրամի դիմաց կատարողականը կազմել է 1583804,6 հազար դրամ, որից 949909,3 հազար դրամը վարչական բյուջեի մասով, իսկ 633895,3 հազար դրամը ֆոնդային բյուջեի մասով: Ծախսերը նախորդ տարվա համեմատությամբ նվազել են 165200,2 հազար դրամով կամ 47,5 %-ով:

- Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը նախատեսված 820594,5 հազար դրամի դիմաց կազմել են 481446,9 հազար դրամ կամ կատարողականը կատարվել է 58,7 %-ով: Նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 220794,5 հազար դրամով կամ 36,8%-ով: :
  Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերի մեջ աշխատակազմի պահպանման ծախսերը նախատեսված 402300,0 հազար դրամի դիմաց կազմել են 328806,2 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 81,7% : Նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 27404,9 հազար դրամով կամ 9 %-ով:
  - Տնտեսական հարաբերությունների բնագավառով՝ նախատեսված 532087,7 հազար դրամի դիմաց կազմել է 300546,8 հազար դրամ կամ կատարողականը կատարվել է 56,5%-ով, Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 23926,1 հազար դրամով կամ 7,3 %-ով, որից՝
  -գյուղատնտեսության ոլորտ՝ ՝ նախատեսված 121507,7 հազար դրամի դիմաց ծախսերը կազմել են 74285,2 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 61,1 %: Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 51893,2 հազար դրամով կամ 41,1%-ով:
  - -ճանապարհային տրանսպորտ՝ նախատեսված 430580,0 հազար դրամի դիմաց ծախսերը կազմել են 244511,2 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 56,8 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 20976,8 հազար դրամով կամ 9,4%-ով:
  - տնտեսական հարաբերություններ այլ դասերին չպատկանող՝ նախատեսված / հողի և գույքի օտարումից / 20000,0 հազար դրամի դիմաց կազմել 18249,6 հազար դրամ, կատարվել է 91,2 %-ով: Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 6990,2 հազար դրամով կամ 27,7%-ով:
- Շրջակա միջավայրի պաշտպանության գծով ծախսերը նախատեսված 197030,0 հազար դրամի դիմաց կազմել են 123933,2 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 62,9 %: Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 15324,0 հազար դրամով կամ 11 %-ով:
- Բնակարանային շինարարության և կոմունալ տնտեսության գծով ծախսերը նախատեսված 1049659,0 հազար դրամի դիմաց կազմել են 406410,0 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 38,7%-ով: Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 118009,4 հազար դրամով կամ 22,4 %-ով:

- Հանգիստ, մշակույթ և կրոն բնագավառով նախատեսված 174426,0 հազար դրամի դիմաց կազմել են 69627,9 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 39,9 %: Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 39980,2 հազար դրամով կամ 36,5 %-ով:
- Կրթության բնագավառով նախատեսված 213192,9 հազար դրամի դիմաց ծախսերը կազմել են 198264,7 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 93%: Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 13871,4 հազար դրամով կամ 6,5 %-ով:
- Սոցիալական պաշտպանության գծով ծախսերը նախատեսված 8500,0 հազար դրամի դիմաց կազմել են 3575,0 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 42,1%: Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 2372,8 հազար դրամով կամ 39,9 %-ով:
- Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդի մնացորդը կազմել է 328000,0 հազար դրամ:

2.2 Ըստ տնտեսագիտական դասակարգմամբ

- Աշխատանքի վարձատվություն հոդվածով՝ նախատեսված 303553,0 հազար դրամի դիմաց կատարողականը կազմել է 259100,8 հազար դրամ կամ է 85,4 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 1788,4 հազար դրամով կամ 0,7%-ով
- Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման համար՝ նախատեսված 659475,0 հազար դրամի դիմաց ծախսերը կազմել են 281785,2 հազար դրամ, կատարվել են 42,7 %-ով: Նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 14495,8 հազար դրամով կամ 5,4%-ով;
- Դրամաշնորհների տրամադրման գծով՝ նախատեսված 323762,9 հազար դրամի դիմաց ծախսերը կազմել են 311364,3 հազար դրամ, կատարվել են 96,1 %-ով: Նախորդ տարվա համեմատությամբ աճել են 37751,3 հազար դրամով կամ 13,8%-ով:
- Սոցիալական նպաստների գծով՝ նախատեսված 81557,7 հազար դրամի դիմաց ծախսերը կազմել են 77910,2 հազար դրամ, կատարվել են 95,5%-ով: Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 27924,1 հազար դրամով կամ 26,4%-ով
- Այլ ծախսերի գծով՝ նախատեսված 352672,0 հազար դրամի դիմաց ծախսերը կազմել են 19748,8 հազար դրամ, կատարվել են 5,5 %-ով:
- Ոչ ֆինանսական ակտիվների գծով՝ ծախսերը նախատեսված 1630469,5 հազար դրամի դիմաց կազմել են 652144,9 հազար դրամ, կատարվել են 40 %-ով : Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 210831,4 հազար դրամով կամ 24,4 %-ով, որից՝

  - շենքերի շինությունների կառուցում ՝ նախատեսված 833186,5 հազար դրամի դիմաց ծախսվել է 286111,3 հազար դրամ, կատարվել են 34,3 %-ով: Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 49508,3 հազար դրամով կամ 14,8 %-ով:

  - շենքերի շինությունների կապիտալ վերանորոգում՝ նախատեսված 684542,0 հազար դրամի դիմաց ծախսվել է 314075,8 հազար դրամ, կատարվել են 45,9 %-ով : Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 170346,0 հազար դրամով կամ 35,2 %-ով:

  - տրանսպորտային սարքավորում ՝ նախատեսված 49250,0 հազար դրամի դիմաց ծախսվել է 120,0 հազար դրամ, կատարվել են 0,2 %-ով : Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 26331,0 հազար դրամով կամ 99,5 %-ով:

- այլ մեքենաներ սարքավորումներ՝ նախատեսված 2200,0 հազար դրամի դիմաց գումար չի ծախսվել: Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 398,0 հազար դրամով:
- վարչական սարքավորումներ՝ նախատեսված 7001,0 հազար դրամի դիմաց ծախսվել է 3432,5 հազար դրամ, կատարվել են 49 %-ով: Նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 3546,1 հազար դրամով կամ 50,8 %-ով:
- աճեցվող ակտիվներ՝ նախատեսված 8290,0 հազար դրամի դիմաց ծախսվել է 8289,0 հազար դրամ, կատարվել են 100 %-ով: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է 883,7 հազար դրամով,կամ 11,9 %-ով:
- նախագծահետազոտական ծախսեր՝ նախատեսված 46000,0 հազար դրամի դիմաց ծախսվել է 40116,3 հազար դրամ, կամ կատարողականը կազմել է 87,2 % : Նախորդ տարվա համեմատությամբ ավել է 18414,3 հազար դրամով կամ 84,5 %-ով:

- Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր՝

- այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր՝ նախատեսված 5000,0 հազար դրամի դիմաց մուտքագրվել է 6066,0 հազար դրամ կամ 121,3%-ով, Նախորդ տարվա համեմատությամբ/12401,2/ նվազել է 6335,2 հազար դրամով կամ 51,1%-ով:
- հողի իրացումից մուտքեր՝ նախատեսված 15000,0 հազար դրամի դիմաց մուտքագրվել է 12183,6 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 81,2%: Նախորդ տարվա համեմատությամբ/12838,5/ նվազել է 654,9 հազար դրամով կամ 5,1%-ով:

Հաշվետու տարում Տաշիր համայնքի բյուջեի պահուստային ֆոնդից ծախսեր չեն կատարվել:

Հաշվետու տարում համայնքի բյուջեն պարտքեր չի սպասարկել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
27 փետրվարի 2025 թվականի N 21-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-րդ կետով և 82.1-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ
Է. ԱՐՇԱԿՅԱՆ
Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Տ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Հ. ՄԱՐԴՈՅԱՆ
Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ
Գ. ՋԱՎՈՒԿՅՅԱՆ
Ա. ՍՈԼՈՅԱՆ
Է. ՍՈՂՈՅԱՆ
Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2025 փետրվարի 27
ք. Տաշիր

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Տաշիր համայնքի ավագանու
2025 թվականի փետրվարի 27-ի N 21-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

	Ծրագրի անվանումը	Ծրագրի արդյունք	Ծրագրի արժեքը հազ. դրամ	Համայնքի բյուջե	Դոնոր	Պետական բյուջե
1.	***Տաշիր համայնքի փողոցների լուսավորության ցանցի ընդլայնում և արդիականացում՝ նոր էներգաարդյունավետ տեխնոլոգիաների միջոցով, 2023թ-ից տեղափոխվել է 2024թ***	Տաշիր քաղաքի 12 փողոցներում և համայնքի 10 բնակավայրերի/ Տաշիր Սարատովկա, Լեռնահովիտ, Մեծավան, Ձորամուտ, Գոգավան, Պաղաղբյուր, Կաթնառատ, Ապավեն, Արծնի/ առաջնային և երկրորդային նշանակություն ունեցող փողոցներում տեղադրվել են 765 էներգախնայող լուսատու և 30 արևային կայանից սնուցվող լուսատու: ***100 %***	***208,155***	***62,446***		***145,708***
2.	***Տաշիր համայնքի Բլագոդարնոյե և Ապավեն բն գազիֆիկացում, 2023թ-ից տեղափոխվել է 2024թ***	Ապավեն բնակավայրում 2,46 կմ երկարությամբ գազամատակարարման ցանցի առկայություն Բնակավայրի շուրջ 60 բնակիչ Ապավեն բնակավայրում գազով ապահովում Ապավեն բնակավայրում	***97,486***	***34,120***		***63,366***

		203 բնակիչ կունենա կյանքի որակի բարելավվում Բլագոդարնոյե բնակավայրում 5,554 կմ երկարությամբ գազատար ***100 %***				
3.	***Տաշիր համայնքի Մեծավան, Լեռնահովիտ, Պաղաղբյուր, Նորաշեն, Արծնի, Ապավեն, Ձորամուտ և Մեդովկա բնակավայրերի ճանապարհների վերանորոգում սալարկմամբ, 2023թ-ից տեղափոխվել է 2024թ***	Մեծավան Բնակավայր Գայի փողոց, 440*6 , 00-ից 0,44կմ, և Շահումյան փողոց 380*6, 00-ից 0,38կմ Լեռնահովիտ բնակավայր 1 փողոց նրբանցք 1, 500*6, 00-ից 0,5կմ, 5 փողոց նրբանցք 2, 110*5, 00-ից 0,11կմ Պաղաղբյուր բնակավայր Փողոց 1 6*83, 00-ից 0,083կմ, Նորաշեն բնակավայր Ռ. Բաղդասարյան փողոց, 450*6, 00-ից 0,45կմ Արծնի բնակավայր 1 փողոց, 166*6, 00-ից 0,166կմ Ապավաեն բնակավայր 1 փողոց, 125*6, 00-ից 0,125կմ Ձորամուտ բնակավայր 1 փողոց 300*6, 00-ից 0,3կմ Մեդովկա բնակավայր 3 փողոց, 500*5մ, 0,505-ից 1,005կմ ***100 %***	***228,744***	***68,623***		***160,120***

4.	***Տաշիր համայնքի Տաշիր բն ԲԲՇ-ների տանիքների վերանորոգման, էներգաարդյունավետության և ջերմաարդյունավետության բարձրացման ծրագիր, 2023թ-ից տեղափոխվել է 2024թ***	Անի բնակելի զանգվածի թիվ 2, 8, 15 և 16 և Գետափնյա 8 շենքերի տանիքների վերանորոգում և մասնակի ջերմաարդյունավետության ու էներգախնայողության կիրառում: ***100 %***	***157,394***	***47,218***	***31,478***	***78,697***
5.	***ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի Մեծավան, Նորաշեն, Արծնի և Ապավեն բնակավայրերի խմելու ջրամատակարարման, ինչպես նաև ջրահեռացման համակարգի կառուցում/նորոգում/ընդլայնում, 2024թ. սուբվենցիա:***	Մեծավան բնակավայրի 5770 մ նոր չափանիշներին համապատասխան ջրագիծի ներքին ցանցի կառուցում և 500 խմ ջրամբարի կառուցում Նորաշեն բնակավայրի 1700 մ խմելու ջրի նոր չափանիշներին համապատասխան արտաքին ցանցի ջրագծի կառուցում Արծնի բնակավայրի 1000 մ խմելու ջրի նոր չափանիշներին համապատասխան ջրագիծ եւ 10 տ տարողությամբ ջրամբարի կառուցում Ապավեն 15 մ խմելու ջրի ջրագծի խողովակի ջերմամեկուսացում , 2 խմ ջրամբարի եւ ակունքի վերանորոգում,կահավորում ***25%***	***129.730***	***32.432***		***97.297***
6.	***ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի Լեռնահովիտ, Դաշտադեմ, Նովոսելցովո, Պետրովկա,Կաթնառատ,***	Լեռնահովիտ բնակավայր, 300 մ նոր չափանիշներին համապատասխան ջրագիծ, Դաշտադեմ բնակավայր,	***135.206***	***40.562***		***94.644***

	Միխայլովկա բնակավայրերի խմելու ջրամատակարարման համակարգի կառուցում, Նորամուտ եւ Բլագոդարնոյե բնակավայրերի ՕԿՋ-ների վերանորոգում ու կառուցում եւ Կաթնառատի բնակավայրի կոյուղագծի կառուցում, 2024թ. սուբվենցիա:	14000 մ նոր չափանիշներին համապատասխան ջրագիծ, Նովոսելցովո բնակավայր, 700 մ նոր չափանիշներին համապատասխան ջրագիծ, Պետրովկա բնակավայր, 1800 մ նոր չափանիշներին համապատասխան ջրագիծ, Կաթնառատ բնակավայր, 4450 մ նոր չափանիշներին համապատասխան ջրագիծ, Միխայլովկա բնակավայր, ստորգետնյա եղանակով ջրագծի կառուցում, Նորամուտ բնակավայրի ՕԿՋ-ի մաքրում, Բլագոդարնոյե բնակավայրի ՕԿՋ-ի մաքրում, վերանորոգում Կաթնառատի բնակավայր 850 մ կոյուղագծի կառուցում ***20 %***				
7.	***ՀՀ Լոռու Մարզի Տաշիր քաղաքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման, էներգաարդյունավետության եւ ջերմաարդյունավետության բարձրացման ծրագիր, 2024թ. սուբվենցիա:***	Անի բնակելի զանգվածի թիվ 4, 5, 6 և Շահումյան 5, 7 շենքերի տանիքների վերանորոգում և մասնակի ջերմաարդյունավետության ու էներգախնայողության կիրառում: ***15 %***	***194.438***	***14.758***	***43.572***	***136.106***

8.	***Տաշիր համայնքի Մեծավան,*** Նորաշեն, Ապավեն, Արծնի, ***Լեռնահովիտ, Ձորամուտ,*** Սարչապետ, ***Պաղաղբյուր բնակավայրերի ճանապարհների վերանորոգում՝ սալարկմամբ, 2024թ. սուբվենցիա:***	Նորաշեն բնակավայր Ռ. Բաղդասարյան փողոց, 00-ից 0,35կմ, 1462 քմ Յու. Բախշյան 0,05 կմ, 951 քմ Վ. Սարգսյան փ 0,15 կմ, 858 քմ Արծնի բնակավայր 4-րդ փողոց, 00-ից 0,23 կմ, 1566 քմ Ապավեն բնակավայր 1 փողոց, 00-ից 0,125 կմ, 864 քմ Սարչապետ բնակավայր 1 փողոց 0,7կմ, 3606 քմ ***40 %***	***193.756***	***9.687***	***38.751***	***145.317***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2025 թվականի N 22-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հնարապետության քաղաքացիական օրենսգրքի 468-րդ հոդվածի 1-ին մասով, 469-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով պայմանագրում փոփոխություն կատարելու մասին կողմերի համաձայնությունը

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Համաձայնություն տալ ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքին սեփականության իրավունքով պատկանող ք. Տաշիր, Երևանյան փողց, 6-րդ թաղամաս, թիվ 196/1 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության խառը կառուցապատման 6 քմ մակերեսով հողամասի(կադաստրային ծածկագիր՝ 06-008-0103-0123) ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի և «Պրես Ստենդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2021 թվականի դեկտեմբերի 24-ին կնքված «Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին» պայմանագրի «Պայմանագրի ժամկետը» բաժնում փոփոխություն կատարելուն և Պայմանագրի ժամկետը փոխել 10 տարի:

2. Հողամասի վարձակալության վարձավճարը թողնել անփոփոխ:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ
Է. ԱՐՇԱԿՅԱՆ
Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Տ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Հ. ՄԱՐԴՈՅԱՆ
Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ
Գ. ՋԱՎՈՒԿՅՅԱՆ

Ա. ՍՈԼՈՅԱՆ
Է. ՍՈՂՈՅԱՆ
Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2025 փետրվարի 27
ք. Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2025 թվականի N 23-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21 կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի համայնքային գրադարան » համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, Յու Գագարինի փողոց, թիվ 6/2 հասցեում գտնվող գրադարանի շենքը՝ 825,8քմ մակերեսով, և դրա սպասարկման համար անհրաժեշտ 0,226 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուպատման հողամասը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ
Է. ԱՐՇԱԿՅԱՆ
Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Տ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Հ. ՄԱՐԴՈՅԱՆ
Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ
Գ. ՋԱՎՈՒԿՅՅԱՆ
Ա. ՍՈԼՈՅԱՆ
Է. ՍՈՂՈՅԱՆ
Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2025 փետրվարի 27
ք. Տաշիր

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Տաշիր համայնքի ավագանու
2025 թվականի փետրվարի 27-ի N 23-Ա որոշման

Հ/հ	Անվանում, սեփականության իրավունքի վկայականի համարը	Քանակը	Համախառն հաշվեկշռային արժեք	Կուտակված մաշվածություն	Հաշվեկշռային արժեք
1	ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, Գագարինի փողոց, թիվ 6/2 շենք 13012025-06-0022	1	**11717404**	**937392,32**	**10780011,68**
2	ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, Գագարինի փողոց, թիվ 6/2 շենք գրադարանի հողամաս 13012025-06-0022	**1**	**501720**	**0,0**	**501720**
Ընդամենը		**2**	**12219124**	**937392,32**	**11281731,68**

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ն. ՍՈԼՈՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
27 փետրվարի 2025 թվականի N 24-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2025 թվականի մարտի 27-ը, ժամը՝ 14:30-ին:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ
Է. ԱՐՇԱԿՅԱՆ
Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Տ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Հ. ՄԱՐԴՈՅԱՆ
Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ
Գ. ՋԱՎՈՒԿՋՅԱՆ
Ա. ՍՈԼՈՅԱՆ
Է. ՍՈՂՈՅԱՆ
Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ
2025 փետրվարի 27
ք. Տաշիր